# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2025 թվականի մարտի 10-14-ը Սլովենիայի Հանրապետության Լյուբլյանա քաղաքում Հարավարևելյան Եվրոպայի ֆինանսական առաջավոր փորձի կենտրոնի (CEF) կողմից կազմակերպված «Հարկային ուսումնական կենտրոններ» խորագրով աշխատաժողովին մասնակցելու նպատակով Լյուբլյանա գործուղման արդյունքների մասին**

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

1) Սյուզաննա Ղազարյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության խորհրդական

**2. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Սլովենիայի Հանրապետություն, ք.Լյուբլյանա 2025թ. մարտի 10-ից 14-ը:

**3. Հրավիրող կողմը՝**

Հարավարևելյան Եվրոպայի ֆինանսական առաջավոր փորձի կենտրոն (CEF)

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Գործուղման նպատակն էր մասնակցել Արևելյան Եվրոպայի գործընկեր երկրների պետական, հանրային ծառայողների գիտելիքի տարածման առաջավոր փորձի վրա հիմնված գերազանցության կենտրոնի կողմից կազմակերպվող աշխատաժողովին՝ մասնակից երկրներին աջակցելու ֆինանսական և հարկային ոլորտի ուսումնական հաստատություններ ստեղծելու հարցում: Աշխատաժողովը միտված էր ներկայացնելու ֆինանսական կրթման արդի մոտեցումները, մասնավորապես հանրային ծառայողների համար, ինչպես նաև տարածելու լավագույն փորձը ֆինանսական կրթության քաղաքականություններում կիրառվող գործիքակազմով: Այն ուղղված էր իրականացնելու տարածաշրջանային ներկայիս կենտրոնների միջև համեմատական վերլուծություններ՝ բացահայտելով գործնականում հանդիպող խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված քայլերը ֆինանսական ակադեմիաներ ստեղծելու համար:

Աշխատաժողովին մասնակցող երկրների հետ իրականացվել են փոխադարձ քննարկումներ: Հանդիպումը կրում էր ինտերակտիվ բնույթ և առանձնանում էր երկրների միջև բովանդակալից ակտիվ քննարկումներով, ներկայում առկա խնդիրների առաջադրումներով և փոխադարձ շփումներով, ուսումնական կենտրոնների զարգացմանն ուղղված առաջարկությունների ներկայացմամբ:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

**5. Քննարկված թեմաները՝**

Աշխատաժողովի քննարկման թեմաները ներքոնշյալն էին՝

1) Սլովենիայի Հանրապետության Ֆինանսների ակադեմիայի փորձի ներկայացում, քննարկում:

2) Մասնակից բոլոր երկրների ֆինանսական ակադեմիաների փորձի ներկայացում:

3) Ֆինանսական կրթության ոլորտում խնդիրների բացահայտում, ֆինանսական կրթության ուղղությամբ իրականացվող գործողությունների ներկայացում:

4) Ցանկալի և ակնկալվող արդյունքների հասնելու քարտեզագրում՝ յուրաքանչյուր երկրի կողմից:

5) Ֆինանսական ակադեմիաների ֆինանսավորման հնարավորությունները, թվային ուսուցման համար մշակվող էլեկտրոնային ուսուցման հարթակների ձևավորման գործընթացները:

6) Ակադեմիաներում դասավանդող մասնագետների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված համակարգի քննարկում:

7) Դիմորդների, մասնագետների՝ հարկային համակարգ մուտք գործելու համար պահանջների և չափանիշների քննարկում:

8) Ակադեմիաների զարգացմանն ուղղված պլանավորում:

Ակտիվ մասնակցություն եմ ցուցաբերել բոլոր քննարկումներում, որոնցից մի քանիսում ներկայացրել եմ ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի փորձը հարկային և մաքսային ծառայողների համար ընթացող պատրաստման դասընթացների համար իրականացվող ընդունելության գործընթացը, ռազմավարական ուղղությունները և գործնականում իրականացված հաջողված փորձը: Մասնակից բոլոր երկրների կողմից մեծ հետաքրքրություն է առաջացրել ՀՀ ՊԵԿ

ուսումնական կենտրոնի կողմից իրականացվող ընդունելության գործընթացը, մասնավորապես մասնագետների պատրաստման համար նախատեսված գրավոր և բանավոր թեստային փուլերը, գործնականում կիրառվող գործիքակազմն ու առանձնահատկությունները: ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի կողմից իրականացվող գործընթացները դիտարկվել են լավագույն փորձ, որի համատեքստում հետաքրքրություն է առաջացել մասնակիցների կողմից ներդրված համակարգի մանրամասն ուսումնասիրման նպատակով այցելել ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոն և ներդնել ինստիտուցիոնալ համագործակցություն:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Ելույթներ ունեցան Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Մոնղոլիայի, Թուրքիայի, Բուլղարիայի, Սլովենիայի, Սերբիայի և մասնակից այլ երկրների ներկայացուցիչները:

Սլովենիայի ներկայացուցիչները, որպես հրավիրող կողմ, ներկայացրեցին իրենց հարկային համակարգը, վերջին տարիներին ոլորտում իրականացված բարեփոխումները, ֆինանսական կրթմանն ուղղված ազգային մակարդակի ծրագրերը և համագործակցության աղբյուրները: Ելույթի խոսքով հանդես եկավ նաև Հայաստանը, ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի տնօրենը համապարփակ ներկայացրեց Կենտրոնի կողմից կազմակերպվող հարկային ծառայողի պաշտոնի համալրման նպատակով իրականացվող գիտելիքների ստուգման փուլերը, ՀՀ ՊԵԿ համակարգում ներդրված բարեվարքության համակարգը, ծառայողների համար մշակված վարքագծի կանոնները և կիսվեց վերջին երկու տարիների վիճակագրությամբ: Ելույթի դրական արդյունքների մասին փաստում էր բոլոր երկրների մոտ առաջացող հետաքրքրությունն ու հարցերը՝ մեր երկրում կիրառվող մեթոդների և ծառայության ընդունելության համար իրականացվող փուլերի վերաբերյալ:

Աշխատաժողովը վարող մասնագետների ելույթները բազմաբնույթ էին և արտացոլում էին այդ երկրներում առկա խնդիրներն ու դրանց լուծումների փորձը: Աշխատաժողովի թեմաները ներկայացվեցին երեք օրերի ընթացքում՝ յուրաքանչյուր օրվա ավարտին հարց և պատասխանների միջոցով ամփոփելով քննարկված թեմաների բովանդակությունը:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Դասընթացների ավարտին Հարավարևելյան Եվրոպայի ֆինանսական առաջավոր փորձի կենտրոնի (CEF) կողմից մասնակիցները արժանացել են հավասատագրերի՝ «Հարկային և ֆինանսական ակադեմիաներ» թեմայով դասընթացը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ՊԵԿ ներկայացուցիչներին տեղեկատվություն ստանալ Եվրոպական առաջատար ֆինանսական ակադեմիաների կողմից կիրառվող փորձի, միջազգային կազմակերպությունների կողմից հնարավոր հետագա համագործակցության ներդրման վերաբերյալ:

Արդյունքում նախանշվել է ներդնել գործընկերության հստակ կապ ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի և CEF կենտրոնի միջև՝ դասընթացներ և աշխատաժողովներ իրականացնելու ակնկալիքով: Վերոնշյալ դասընթացներն հնարավորություն կտան հարկային, մաքսային ծառայողներին, ինչպես նաև հանրային ծառայության այլ ոլորտների մասնագետներին մասնակցել Եվրոպական լավագույն փորձ ունեցող ֆինանսական ոլորտի դասախոսների դասընթացներին:

Այլ երկրների հետ փորձի փոխանակումը կնպաստի ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը** Ա. Ղազ 18.03.2025թ.